

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
18 հունվարի 2017 թ.
Պետական գրանցման թիվ 12417022

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

30 դեկտեմբերի 2016 թ.

N 298-Ն

ՀՐԱՄԱՆ

**ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ
ՀԱՇՎԱՐԿԻ ՁԵՎԸ ԵՎ ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասը, 75-րդ և 96-րդ հոդվածները՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ձևը և դրա լրացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից: Սույն հրամանի N 1 հավելվածով հաստատված ձևով ավելացված արժեքի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ ներկայացվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար:

Կոմիտեի նախագահ՝

Վ. Հարությունյան

Հավելված
ՀՀ կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահի
2016 թվականի դեկտեմբերի 30-ի
N 298-Ն հրամանի

24

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿ					1. Փաստաթղթի հերթական համարը					(լրացվում է հարկային մարմնի կողմից)				
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ					3. ԱԱՀ վճարողի հաշվառման համարը									
2. Հարկ վճարողի հաշվառման համարը														
4. Հարկ վճարողը														
5. Հարկ վճարողի գտնվելու վայրը (բնակության վայրը)														
6. Հաշվետու ժամանակաշրջանը					Տարի					Ամիս				

(դրամ)

ԲԱԺԻՆ 1. ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ															
ԱԱՀ-ի կրեդիտ					[Ա]. Հարկման բազա					[Բ]. ԱԱՀ կրեդիտ					
7. ԱԱՀ-ի 20% դրույքաչափով հարկվող գործարքների															
8. Ճշգրտող հարկային հաշիվներով գործարքների					X					X					
1) նվազեցում															
2) ավելացում															
9. ԱԱՀ-ի 16.67% հաշվարկային դրույքաչափով հաշվարկվող															
10. ԱԱՀ-ի գծով այլ հարկային պարտավորություն					X										
11. Մատակարարի անունից դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով գործարքների					X					X					
1) նվազեցում					X										
2) ավելացում					X										
12. ԱԱՀ-ի 0-ական դրույքաչափով հարկվող գործարքների, այդ թվում՝										X					
1) Հարկային օրենսգրքի հոդված		2) մաս		3) կետ		X					X				
										X					
										X					
13. ԱԱՀ-ից ազատված գործարքների, այդ թվում՝										X					
1) Հարկային օրենսգրքի հոդված		2) մաս		3) կետ		X					X				
										X					
										X					
14. Արտոնագրային հարկով հարկվող գործունեությունից, այդ թվում՝										X					
										X					
										X					
15. Հաշվարկված ԱԱՀ-ի հարկային պարտավորությունների (ԱԱՀ-ի կրեդիտի) ճշգրտում					[Ա]. Ավելացում					[Բ]. Պակասեցում					
16. Ընդամենը ԱԱՀ-ի կրեդիտ					[Ա]. Հարկման բազա					[Բ]. ԱԱՀ կրեդիտ					
[Ա] = ([7.Ա] - [8.1Ա] + [8.2Ա] + [9.Ա] - [9.Բ]) + [12.Ա] + [13.Ա] + [14.Ա]															
[Բ] = ([7.Բ] - [8.1Բ] + [8.2Բ] + [9.Բ] + [10.Բ] - [11.1Բ] + [11.2Բ] + [15.Ա] - [15.Բ])															
ԱԱՀ-ի դեբետ					[Ա]. Արժեք					[Բ]. ԱԱՀ դեբետ					
17. ՀՀ տարածք ներմուծված ապրանքների															
18. ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների															
19. Ձեռքբերումներին վերաբերող ճշգրտող հարկային					X					X					

հաշիվներով գործարքների				
1) նվազեցում				
2) ավելացում				
20. Հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարի ճշգրտման ընդհանուր գումարը, այդ թվում՝ ըստ ճշգրտման հիմքերի.			[Ա]. Ավելացում	[Բ]. Պակասեցում
1) Հարկային օրենսգրքի հոդված	2) մաս	3) կետ	X	X
21. Ընդամենը ԱԱՀ-ի դեբետ ([17.Բ]+[18.Բ]-[19.1Բ]+[19.2Բ]+[20.Ա]-[20.Բ]) Եթե գործողության արդյունքը՝ - հավասար է 0-ի՝ [Ա] և [Բ] վանդակներում լրացվում է «0» - դրական է՝ լրացվում է [Ա] վանդակը, - բացասական է՝ լրացվում է [Բ] վանդակը			[Ա]. դրական	[Բ]. բացասական
22. Ներմուծված այն ապրանքների, որոնց մասով հարկային օրենսգրքի 79-րդ հոդվածի համաձայն առաջանում է պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումար			[Ա]. Հարկման բազա	[Բ]. Հաշվարկված ԱԱՀ գումար
23. Հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված ԱԱՀ - եթե լրացված է [21.Ա] վանդակը՝ ապա ([16.Բ] - [21.Ա]), - եթե լրացված է [21.Բ] վանդակը՝ ապա ([16. Բ] + [21.Բ]): Եթե նշված գործողության արդյունքը դրական է՝ լրացվում է [Ա] վանդակը, եթե բացասական՝ լրացվում է [Բ] վանդակը, եթե հավասար է 0-ի՝ [Ա] և [Բ] վանդակներում լրացվում է «0»:			[Ա]. Պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումար	[Բ]. Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գումար

ԲԱԺԻՆ 2. ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ

24. Հաշվետու ժամանակաշրջանում ակցիզային հարկի հարկման բազան և հաշվարկված ակցիզային հարկի գումարը

Ծածկագիրը ըստ ԱՏԳ ԱԱ	Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի անվանումը	Հարկման բազայի միավորը	Օտարված ապրանքների քանակը (ծավալը)	Սպիրտայնության աստիճանը, %	Մեկ բնափրային միավորի արժեքը	Ակցիզային հարկի դրույթաչափը	Ակցիզային հարկի գումարը, դրամ
[24.1]	[24.2]	[24.3]	[24.4]	[24.5]	[24.6]	[24.7]	[24.8]

Ընդամենը

25. Ճշգրտող հարկային հաշիվներում արտացոլված ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ակցիզային հարկի հարկման բազան և ակցիզային հարկի գումարը (նվազեցում)

Ծածկագիրը ըստ ԱՏԳ ԱԱ	Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի անվանումը	Հարկման բազայի միավորը	Օտարված ապրանքների քանակը (ծավալը)	Սպիրտայնության աստիճանը, %	Մեկ բնափրային միավորի արժեքը	Ակցիզային հարկի դրույթաչափը	Ակցիզային հարկի գումարը, դրամ
[25.1]	[25.2]	[25.3]	[25.4]	[25.5]	[25.6]	[25.7]	[25.8]

Ընդամենը							
26. Ճշգրտող հարկային հաշիվներում արտացոլված ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ակցիզային հարկի հարկման բազան և ակցիզային հարկի գումարը (ավելացում)							
Ծածկագիրը ըստ ԱՏԳ ԱԱ	Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի անվանումը	Հարկման բազայի միավորը	Օտարված ապրանքների քանակը (ծավալը)	Սպիրտայնության աստիճանը, %	Մեկ բնաիրային միավորի արժեքը	Ակցիզային հարկի դրույթաչափը	Ակցիզային հարկի գումարը, դրամ
[26.1]	[26.2]	[26.3]	[26.4]	[26.5]	[26.6]	[26.7]	[26.8]
Ընդամենը							
<i>դրամ</i>							
27. Հաշվարկված ակցիզային հարկի գումար (ակցիզային հարկի կրեդիտ)							
28. Ճշգրտող հարկային հաշիվներով գործարքների մասով ակցիզային հարկի գումար							
1) նվազեցում							
2) ավելացում							
29. Ակցիզային հարկից ազատված՝ օտարված ապրանքների հարկման բազա							
30. Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված հումքի մասով հայտարարագրում առանձնացված ակցիզային հարկի գումար							
31. Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերված հումքի մասով հարկային հաշիվներում առանձնացված ակցիզային հարկի գումար							
32. Հաշվանցման (պակասեցման) ենթակա ակցիզային հարկի ճշգրտման ընդհանուր գումար, այդ թվում՝ ըստ ճշգրտման հիմքերի						[Ա]. Ավելացում	[Բ]. Պակասեցում
1) Հարկային օրենսգրքի հոդված	2) մաս	3) կետ	4) ենթակետ			X	X
33. Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանում ակցիզային հարկի դեբետ ([30] + [31] + [32.Ա] - [32.Բ]) Եթե գործողության արդյունքը՝ - հավասար է 0-ի՝ [Ա] և [Բ] վանդակներում լրացվում է «0», - դրական է՝ լրացվում է [Ա] վանդակը, - բացասական է՝ լրացվում է [Բ] վանդակը						Ա. դրական	Բ. բացասական
34. Հաշվետու ժամանակաշրջանի արդյունքով - եթե լրացված է [33.Ա] վանդակը, ապա՝ ([27] - [28.1] + [28.2] - [33.Ա]), - եթե լրացված է [33.Բ] վանդակը, ապա՝ ([27] - [28.1] + [28.2] + [33.Բ]): Եթե գործողության արդյունքը դրական է՝ լրացվում է «Ա» վանդակը, եթե բացասական է՝ լրացվում է «Բ» վանդակը, եթե հավասար է 0-ի՝ «Ա» և «Բ» վանդակներում լրացնել «0»:						Ա. Պետական բյուջե վճարման ենթակա ակցիզային հարկի գումարը	Բ. Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ակցիզային հարկի գումարը

Պաշտոնատար անձ

ստորագրությունը, անունը, ազգանունը

ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳ

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՁԵՎԻ

I. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ձևը (այսուհետ՝ միասնական հաշվարկ) ներկայացվում է հարկային մարմին Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Հարկային օրենսգրք) 75-րդ և 96-րդ հոդվածներին համապատասխան:

2. Միասնական հաշվարկի բաժին 2-ը (ակցիզային հարկ) լրացվում է միայն ակցիզային հարկ վճարողների կողմից՝ միայն Հարկային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով սահմանված հարկման օբյեկտ համարվող գործարքների մասով: Մնացած բոլոր դեպքերում հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող միասնական հաշվարկի բաժին 2-ը չի լրացվում:

3. Միասնական հաշվարկի ճշտումները կատարվում են Հարկային օրենսգրքի 54-րդ հոդվածին համապատասխան: Ընդ որում, այն բոլոր դեպքերում, երբ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված միասնական հաշվարկով լրացված է բաժին 1-ը (ԱԱՀ) և բաժին 2-ը (ակցիզային հարկ), հետագայում միասնական հաշվարկը ճշտելիս պարտադիր լրացման ենթակա են միասնական հաշվարկի և բաժին 1-ը, և բաժին 2-ը: Նշված դեպքում ճշտված միասնական հաշվարկ ներկայացվելու և միայն բաժին 1-ը կամ միայն բաժին 2-ը լրացվելու դեպքում Միասնական հաշվարկի չլրացված մասում արժեքային մեծությունները համարվում են գրոյական ցուցանիշներով ներկայացված:

4. Միասնական հաշվարկում արժեքային մեծությունները լրացվում են դրամներով՝ առանց լումաների: Միասնական հաշվարկի վանդակներում

արժեքային մեծության բացակայության դեպքում հաշվարկի այդ վանդակները ընդունվում են «0» (զրո):

5. Միասնական հաշվարկի 1-ին կետը լրացվում է հարկային մարմնի կողմից:

6. Միասնական հաշվարկի 2-րդ կետում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ):

7. Միասնական հաշվարկի 3-րդ կետում լրացվում է ավելացված արժեքի հարկ (այսուհետ՝ ԱԱՀ) վճարողի հաշվառման համարը:

8. Միասնական հաշվարկի 4-րդ կետում լրացվում է հարկ վճարողի լրիվ անվանումը, նոտար կամ անհատ ձեռնարկատեր համարվող ֆիզիկական անձի անունը, ազգանունը: Հարկային օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն թղթային եղանակով Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանը սպասարկող հարկային տեսչություն միասնական հաշվարկ ներկայացնելու դեպքում միասնական հաշվարկի 4-րդ կետում լրացվում է ոչ ռեզիդենտ կազմակերպության լրիվ անվանումը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի անուն-ազգանունը:

9. Միասնական հաշվարկի 5-րդ կետում լրացվում է կազմակերպության գտնվելու վայրը՝ Հարկային օրենսգրքի 23-րդ հոդվածին համապատասխան, իսկ ֆիզիկական անձի դեպքում բնակության վայրը՝ Հարկային օրենսգրքի 26-րդ հոդվածին համապատասխան:

10. Միասնական հաշվարկի 6-րդ կետում լրացվում է այն հաշվետու ժամանակաշրջանը, որի համար ներկայացվում է միասնական հաշվարկը:

II. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՁԵՎԻ ԲԱԺԻՆ 1-Ի (ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ) ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

11. Միասնական հաշվարկի 7-րդ կետի [Ա] վանդակում լրացվում է ԱԱՀ-ի 20% դրույքաչափով հարկվող գործարքների հարկման բազան՝ առանց ԱԱՀ-ի, իսկ [Բ] վանդակում՝ այդ հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը:

12. Միասնական հաշվարկի 8-րդ կետում Հարկային օրենսգրքի 42-րդ հոդվածով սահմանված դեպքերում՝ դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով (բացառությամբ՝ Հարկային օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում մատակարարի անունից (56-րդ հոդվածի 7-րդ մաս) դուրսգրված հարկային հաշիվներով) գործարքների հարկման բազան և հաշվարկված ԱԱՀ-ի գումարը: Միասնական հաշվարկի 8-րդ կետի՝

1) 1-ին ենթակետի [Ա] վանդակում լրացվում է Հարկային օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքում՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով (բացառությամբ՝ Հարկային օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում մատակարարի անունից (56-րդ հոդվածի 7-րդ մաս) դուրսգրված հարկային հաշիվներով) գործարքների հարկման բազան՝ առանց ԱԱՀ-ի, իսկ [Բ] վանդակում՝ այդ հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը,

2) 2-րդ ենթակետի [Ա] վանդակում լրացվում է Հարկային օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքում՝ դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով (բացառությամբ՝ Հարկային օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում մատակարարի անունից (56-րդ հոդվածի 7-րդ մաս) դուրսգրված հարկային հաշիվներով) գործարքների հարկման բազան՝ առանց ԱԱՀ-ի, իսկ [Բ] վանդակում՝ այդ հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը:

13. Միասնական հաշվարկի 9-րդ կետի [Ա] վանդակում լրացվում է ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման դիմաց ԱԱՀ-ի գումարը ներառող հատուցման ընդհանուր գումարը (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը), իսկ 9-րդ կետի [Բ] վանդակում՝ ԱԱՀ-ի գումարը, որը որոշվում է ԱԱՀ-ի գումարը ներառող հատուցման գումարի նկատմամբ կիրառելով 16.67% հաշվարկային դրույքաչափ:

14. Միասնական հաշվարկի 10-րդ կետում լրացվում է ԱԱՀ-ի գծով այլ հարկային պարտավորության ընդհանուր գումարը, այդ թվում՝

1) միասնական հաշվարկի 11-րդ և 12-րդ կետերում նշված գործարքների հետ չկապված պարտավորությունների գումարները (մասնավորապես՝ Հարկային օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում առաջացած պարտավորության գումարը),

2) Հարկային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների խախտմամբ դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները:

15. Միասնական հաշվարկի 11-րդ կետի 1-ին ենթակետում լրացվում է Հարկային օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքում տվյալ հաշվետու ժամանակաշրջանում Հարկային օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան մատակարարի անունից դուրս գրված ճշգրտվող հարկային հաշիվներով գործարքների հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը (ԱԱՀ-ի նվազեցում), իսկ 11-րդ կետի 2-րդ ենթակետում՝ Հարկային օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքում Հարկային օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան մատակարարի անունից դուրս գրված ճշգրտվող հարկային հաշիվներով գործարքների հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը (ԱԱՀ-ի ավելացում):

16. Միասնական հաշվարկի 12-րդ կետում լրացվում է Օրենսգրքի 65-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ի 0-ական դրույքաչափով գործարքների հարկման բազան: Ընդ որում, միասնական հաշվարկի 12-րդ կետի 1-3 ենթակետերով նախատեսված սյունակներում՝ ըստ առանձին տողերի լրացվում են Հարկային օրենսգրքի այն հոդվածի, մասի և կետի համարները, որի համաձայն այդ գործարքները համարվում են ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներ, իսկ համապատասխան տողի «Ա» վանդակում լրացվում է այդ գործարքների հարկման բազան:

17. Միասնական հաշվարկի 13-րդ կետի «Ա» վանդակում լրացվում է Հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ից ազատված

գործարքների ու գործառնությունների, ինչպես նաև միջազգային համաձայնագրերով կամ այլ օրենքներով ԱԱՀ-ով հարկվող գործարքների մասով ԱԱՀ-ից ազատման արտոնություն սահմանված լինելու այդ գործարքների ու գործառնությունների հարկման բազան: Միասնական հաշվարկի 13-րդ կետի 1-3 ենթակետերով նախատեսված սյունակներում՝ ըստ առանձին տողերի լրացվում են Հարկային օրենսգրքի այն հոդվածի, մասի և կետի համարները, որի համաձայն այդ գործարքները (գործառնությունները) համարվում են ԱԱՀ-ից ազատված գործարքներ կամ գործառնություններ, իսկ համապատասխան տողի «Ա» վանդակում լրացվում է այդ գործարքների (գործառնությունների) հարկման բազան: Օրինակ, հանրակրթական հիմնական ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքների մասով տվյալները միասնական հաշվարկում արտացոլվում են առանձին տողով՝ այդ տողի 13-րդ կետի 1-ին սյունակում լրացնելով «64» թիվը, 2-րդ սյունակում՝ «2» թիվը, 3-րդ սյունակում՝ «4» թիվը, իսկ [8.Ա] սյունակում՝ այդ գործարքի հարկման բազան:

18. Միասնական հաշվարկի 14-րդ կետում լրացվում է արտոնագրային հարկով հարկվող գործունեությունից իրացման շրջանառությունը:

19. Միասնական հաշվարկի 15-րդ կետում լրացվում է Հարկային օրենսգրքով սահմանված դեպքերում հաշվարկված ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորության (ԱԱՀ-ի կրեդիտի) ավելացման կամ պակասեցման ենթակա գումարները:

20. Միասնական հաշվարկի 16-րդ կետի [Ա] վանդակում լրացվում է [7.Ա], [8.2Ա], [9.Ա], [12.Ա], [13.Ա], [14.Ա] վանդակներում նշված թվերի հանրագումարի և [8.1Ա], [9.Բ] վանդակներում նշված թվերի տարբերությունը, իսկ [Բ] վանդակում լրացվում է [7.Բ], [8.2Բ], [9.Բ], [10.Բ], [11.2Բ], [15.Ա] վանդակներում նշված թվերի հանրագումարի և [8.1Բ], [11.1Բ], [15.Բ] վանդակներում նշված թվերի տարբերությունը:

21. Միասնական հաշվարկի 17-րդ կետի [Ա] վանդակում լրացվում է «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների մաքսային արժեքների և(կամ)

ԵՏՄ անդամ պետություններից ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների հարկման բազաների հանրագումարը, այդ թվում՝ ներմուծված այն ապրանքների մասով, որոնց ներմուծման համար մաքսային մարմինների կողմից ԱԱՀ չի գանձվում կամ հարկային մարմիններին ԱԱՀ չի հաշվարկվում ու չի վճարվում: Միասնական հաշվարկի 17-րդ կետի [Բ] վանդակում լրացվում է ապրանքների ներմուծման համար մաքսային մարմինների կողմից գանձված (գանձման ենթակա) և (կամ) հարկային մարմիններին վճարված (վճարման ենթակա) ԱԱՀ-ի ընդհանուր գումարը: Ընդ որում, Միասնական հաշվարկի 17-րդ կետում՝

1) լրացվում են ներմուծված այն ապրանքների, բացառությամբ՝ Հարկային օրենսգրքի 79-րդ հոդվածով սահմանված դեպքերի, մաքսային արժեքն ու ԱԱՀ-ի գումարը, որոնց ներմուծման մաքսային հայտարարագրի (ներմուծման ճշտված մաքսային հայտարարագրի) գրանցման օրն ընդգրկված է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում,

2) լրացվում են ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների մասով ներմուծված այն ապրանքների, բացառությամբ՝ Հարկային օրենսգրքի 79-րդ հոդվածով սահմանված դեպքերի, հարկման բազան և ԱԱՀ-ի գումարը, որոնց Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում,

3) Հարկային օրենսգրքի 79-րդ հոդվածով սահմանված դեպքերում, երբ կիրառվում է ապրանքների ներմուծման մասով ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետի հետաձգում, լրացվում է միայն միասնական հաշվարկի 17-րդ կետի [Ա] վանդակը ([Բ] վանդակում հարկի գումար չի լրացվում):

22. Միասնական հաշվարկի 18-րդ կետի [Ա] վանդակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և ստացված ծառայությունների

ընդհանուր հարկման բազան, իսկ [Բ] վանդակում՝ մատակարարների, աշխատանք կատարողների և ծառայություն մատուցողների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի ընդհանուր գումարը: Սույն կետով ներառվում են՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ձեռքբերումների մասով մատակարարների կողմից դուրս գրված այն հարկային հաշիվներում արտացոլված տվյալները, որոնք ապրանքը ձեռք բերողի, աշխատանքն ընդունողի և (կամ) ծառայությունը ստացողի կողմից ստացվել և Հարկային օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված կարգով վավերացվել է մինչև միասնական հաշվարկի ներկայացման համար Հարկային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետը:

Այն դեպքերում, երբ տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ձեռքբերումների մասով հարկային հաշիվները մատակարարների կողմից դուրս են գրվում միասնական հաշվարկի ներկայացման համար Հարկային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետից հետո, ինչպես նաև մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվները ապրանքը ձեռք բերողի, աշխատանքն ընդունողի և (կամ) ծառայությունը ստացողի կողմից Հարկային օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված կարգով վավերացվում է միասնական հաշվարկի ներկայացման համար Հարկային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետից հետո, այդ հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկատվությունը ներառվում է այդ հարկային հաշիվները Հարկային օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված կարգով վավերացնելու օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի միասնական հաշվարկի 20-րդ կետում՝ որպես հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարի ավելացում:

23. Միասնական հաշվարկի 19-րդ կետի 1-ին ենթակետի «Ա» վանդակում լրացվում է ձեռքբերումներին վերաբերվող Հարկային օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքերում՝ դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով գործարքների հարկման բազան՝ առանց ԱԱՀ-ի, իսկ [Բ]

վանդակում՝ այդ հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը: Միասնական հաշվարկի 19-րդ կետի 2-րդ ենթակետի «Ա» վանդակում լրացվում է ձեռքբերումներին վերաբերվող Հարկային օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքերում՝ դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներով գործարքների հարկման բազան՝ առանց ԱԱՀ-ի, իսկ [Բ] վանդակում՝ այդ հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը:

24. Միասնական հաշվարկի 20-րդ կետում լրացվում են Հարկային օրենսգրքի համաձայն կատարվող վերահաշվարկների արդյունքում, հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարների ավելացումը կամ պակասեցումը՝ ըստ հարկային օրենսգրքով սահմանված հիմքերի՝ լրացնելով հոդվածի, մասի և կետի համարները: Մասնավորապես՝

1) ձեռք բերված և (կամ) ներմուծված ապրանքները, ընդունված աշխատանքները և (կամ) ստացված ծառայությունները վերագրվում են ԱԱՀ-ով հարկման օբյեկտ չհամարվող, ԱԱՀ-ից ազատված և Հարկային օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված՝ հատուկ հարկային համակարգերի շրջանակներում հարկման ենթակա գործարքներին, որոնց մասով Հարկային օրենսգրքի 72-րդ հոդվածի համաձայն ԱԱՀ-ի հաշվանցումներ (պակասեցումներ) չեն կատարվում,

2) հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցվող ԱԱՀ-ի այն գումարները, որոնց մասով հաշվանցման իրավունքը հետաձգվել էր և Հարկային օրենսգրքի 71-րդ հոդվածի համաձայն ենթակա է հաշվանցման տվյալ հաշվետու ժամանակաշրջաններում,

3) ԱԱՀ-ի այն գումարները, որոնց մասով Հարկային օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված դեպքերում պետք է կատարվեն վերաձևակերպումներ,

4) ԱԱՀ-ի այն գումարները, որոնք օրենսգրքի 79-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարողների կողմից ենթակա են հաշվանցման (հաշվարկված պարտավորություններից պակասեցման)՝ դրանց վճարման օրն ընդգրկող

հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող միասնական հաշվարկով:

25. Միասնական հաշվարկի 21-րդ կետում լրացվում է դերբետագրման արդյունքը, ընդ որում, եթե՝

1) $([17.Բ] + [18.Բ] - [19.1Բ] + [19.2Բ] + [20.Ա] - [20.Բ])$ հավասար է 0-ի, ապա հաշվարկի 21-րդ կետի [Ա] և [Բ] վանդակներում լրացվում է «0»,

2) $([17.Բ] + [18.Բ] - [19.1Բ] + [19.2Բ] + [20.Ա] - [20.Բ])$ մեծ է 0-ից (դրական է), ապա այդ հաշվարկի 0-ից տարբերվող թվի բացարձակ մեծությունը լրացվում է 21-րդ կետի [Ա] վանդակում, իսկ [Բ] վանդակում լրացվում է «0»,

3) $([17.Բ] + [18.Բ] - [19.1Բ] + [19.2Բ] + [20.Ա] - [20.Բ])$ փոքր է 0-ից (բացասական է), ապա այդ հաշվարկի 0-ից տարբերվող թվի բացարձակ մեծությունը լրացվում է 21-րդ կետի [Բ] վանդակում, իսկ [Ա] վանդակում լրացվում է «0»:

26. Միասնական հաշվարկի 22-րդ կետում՝ [Ա] վանդակում լրացվում է ներմուծված այն ապրանքների մաքսային արժեքը կամ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների մասով հարկման բազան և ԱԱՀ-ի գումարները, որոնք Հարկային օրենսգրքի 79-րդ հոդվածի համաձայն պետք է արտացոլվեն պարտավորության առաջացման հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող միասնական հաշվարկում՝ որպես ներմուծված ապրանքների մասով պետական բյուջեի նկատմամբ պարտավորության գումարներ: Միասնական հաշվարկի 22-րդ կետում արտացոլված գումարները հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացված՝ ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների համար ԱԱՀ-ի պարտավորության ընդհանուր գումարի հաշվարկմանը չեն մասնակցում:

27. Հաշվարկի 23-րդ կետում լրացվում է տվյալ ժամանակաշրջանում պետական բյուջե վճարման ենթակա կամ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գումարները: Ընդ որում,

1) եթե լրացված է միասնական հաշվարկի 21-րդ կետի [Ա] վանդակը՝ ապա ([16.Բ] - [21.Ա]) հաշվարկի 0-ից տարբերվող արդյունքը լրացվում է՝

ա. [Ա] վանդակում, եթե այդ արդյունքը դրական թիվ է և [Բ] վանդակում լրացվում է «0».

բ. [Բ] վանդակում՝ բացարձակ արժեքով, եթե այդ արդյունքը բացասական թիվ է և [Ա] վանդակում լրացվում է «0».

2) եթե լրացված է միասնական հաշվարկի 21-րդ կետի [Բ] վանդակը՝ ապա ([16.Բ] + [21.Բ]) արդյունքը լրացվում է [Ա] վանդակում, իսկ [Բ] վանդակում լրացվում է «0».

3) եթե լրացված է միասնական հաշվարկի 21-րդ կետի [Ա] վանդակը և ([16.Բ] - [21.Ա]) հաշվարկի արդյունքը հավասար է 0-ի՝ միասնական հաշվարկի 23-րդ կետի [Ա] և [Բ] վանդակներում լրացվում է «0»:

III. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՁԵՎԻ ԲԱԺԻՆ 2-Ի (ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ)

ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

28. Միասնական հաշվարկի 24-րդ կետի՝

1) [24.1] և [24.2] սյունակներում լրացվում է ակցիզային հարկով հարկման ենթակա՝ հաշվետու ժամանակաշրջանում օտարված ապրանքների ծածկագրերը և անվանումները՝ ըստ ԱՏԳ ԱԱ դասակարգչի: Ընդ որում, ծածկագրի նիշերի թիվը պետք է համապատասխանի Հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասում բերված աղյուսակում նշված ծածկագրերի նիշերի քանակին,

2) [24.3] սյունակում լրացվում է տվյալ ապրանքների համար 88-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված չափման բնափրային միավորները,

3) [24.4] սյունակում լրացվում է օտարված ապրանքների քանակը (ծավալը),

4) [24.5] սյունակը լրացվում է միայն ԱՏԳ ԱԱ 2207 և 2208 ծածկագրերին դասվող ապրանքների համար, իսկ [24.6] սյունակում լրացվում է ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող տվյալ ապրանքի արժեքը (առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գումարների) հաշվարկված Հարկային օրենսգրքով սահմանված համապատասխան բնաիրային չափման միավորի՝ մեկ լիտրի կամ մեկ կիլոգրամի համար, իսկ ծխախոտի արտադրանքի համար լրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մակնշված՝ ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գինը (առանց ԱԱՀ-ի),

5) [24.7] սյունակում լրացվում է տվյալ ապրանքների համար Հարկային օրենսգրքով սահմանված կամ Հարկային օրենսգրքին համապատասխան հաշվարկված ակցիզային հարկի դրույքաչափը, իսկ [24.8] սյունակում՝ ակցիզային հարկի գումարը,

6) [24.8] սյունակում լրացվում է ըստ առանձին ապրանքատեսակների ակցիզային հարկի գումարը, իսկ «Ընդամենը» տողում լրացվում է [24.8] սյունակում լրացված թվերի հանրագումարը:

29. Միասնական հաշվարկի 25-րդ կետում լրացվում են Հարկային օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքում գործարքի ճշգրտման արդյունքները: Ճշգրտվող հարկային հաշիվներում արտացոլված ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մասով միասնական հաշվարկի [25.1] և [25.2] սյունակներում լրացվում է ապրանքների ծածկագրերը և անվանումները՝ ըստ ԱՏԳ ԱԱ դասակարգչի, [25.3] սյունակում՝ տվյալ ապրանքների համար Հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափման բնաիրային միավորները, [25.4] սյունակում՝ ապրանքների քանակը (ծավալը), [25.7] սյունակում՝ Հարկային օրենսգրքով սահմանված կամ Հարկային օրենսգրքին համապատասխան հաշվարկված ակցիզային հարկի դրույքաչափը, իսկ [25.8] սյունակում՝ ակցիզային հարկի գումարը: Միասնական

հաշվարկի [25.5] սյունակը լրացվում է միայն ԱՏԳ ԱԱ 2207 և 2208 ծածկագրերին դասվող ապրանքների համար, իսկ [25.6] սյունակում լրացվում է ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող տվյալ ապրանքի արժեքը (առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գումարների) հաշվարկված Հարկային օրենսգրքով սահմանված համապատասխան բնափրային չափման միավորի՝ մեկ լիտրի կամ մեկ կիլոգրամի համար, իսկ ծխախոտի արտադրանքի համար լրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մակնշված՝ ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գինը (առանց ԱԱՀ-ի):

30. Միասնական հաշվարկի 26-րդ կետում լրացվում են Հարկային օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքում գործարքի ճշգրտման արդյունքները: Ճշգրտվող հարկային հաշիվներում արտացոլված ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մասով միասնական հաշվարկի [26.1] և [26.2] սյունակներում լրացվում է ապրանքների ծածկագրերը և անվանումները՝ ըստ ԱՏԳ ԱԱ դասակարգչի, [26.3] սյունակում՝ տվյալ ապրանքների համար Հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափման բնափրային միավորները, [26.4] սյունակում՝ ապրանքների քանակը (ծավալը), [26.7] սյունակում՝ Հարկային օրենսգրքով սահմանված կամ Հարկային օրենսգրքին համապատասխան հաշվարկված ակցիզային հարկի դրույքաչափը, իսկ [26.8] սյունակում՝ ակցիզային հարկի գումարը: Միասնական հաշվարկի [26.5] սյունակը լրացվում է միայն ԱՏԳ ԱԱ 2207 և 2208 ծածկագրերին դասվող ապրանքների համար, իսկ [26.6] սյունակում լրացվում է ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող տվյալ ապրանքի արժեքը (առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գումարների) հաշվարկված Հարկային օրենսգրքով սահմանված համապատասխան բնափրային չափման միավորի՝ մեկ լիտրի կամ մեկ կիլոգրամի համար, իսկ ծխախոտի արտադրանքի համար լրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով

մակնշված՝ ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գինը (առանց ԱԱՀ-ի):

31. Միասնական հաշվարկի 27-րդ կետում լրացվում է ակցիզային հարկի գումարը, որը հավասար լինի [24.8] սյունակի «Ընդամենը» տողում լրացված գումարին:

32. Միասնական հաշվարկի 28-րդ կետի՝

1) 1-ին ենթակետում լրացվում է ճշգրտող հարկային հաշիվներում արտացոլված ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մասով ակցիզային հարկի նվազեցվող գումարը, որը հավասար լինի [25.8] սյունակի «Ընդամենը» տողում լրացված գումարին,

2) 2-րդ ենթակետում լրացվում է ճշգրտող հարկային հաշիվներում արտացոլված ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մասով ակցիզային հարկի ավելացվող գումարը, որը հավասար լինի [26.8] սյունակի «Ընդամենը» տողում լրացված գումարին:

33. Միասնական հաշվարկի 29-րդ կետում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում Հարկային օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ ակցիզային հարկով չհարկվող գործարքների ու գործառնությունների հարկման բազան:

34. Միասնական հաշվարկի 30-րդ կետում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում ակցիզային հարկ վճարողի կողմից հումքի ներմուծման մասով հայտարարագրերում առանձնացված ակցիզային հարկի գումարը:

35. Միասնական հաշվարկի 31-րդ կետում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում ակցիզային հարկ վճարողի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում որպես հումք ձեռք բերված ապրանքի մասով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ակցիզային հարկի գումարը:

36. Միասնական հաշվարկի 32-րդ կետում լրացվում է Հարկային օրենսգրքի համաձայն կատարվող վերահաշվարկների (վերաձևակերպումների) արդյունքում, հաշվանցման (պակասեցման) ենթակա ակցիզային հարկի գումարների ավելացումը կամ պակասեցումը՝ ըստ Հարկային օրենսգրքով սահմանված հիմքերի՝ լրացնելով հոդվածի, մասի և կետի համարները:

37. Միասնական հաշվարկի 33-րդ կետում լրացվում է միասնական հաշվարկի 30-րդ, 31-րդ կետերում, [32.Ա] վանդակում լրացված թվերի հանրագումարի և [32.Բ] վանդակում լրացված թվի տարբերությունը: Եթե գործողության արդյունքը հավասար է 0-ի՝ [Ա] և [Բ] վանդակներում լրացվում է «0», եթե դրական է՝ լրացվում է [Ա] վանդակը, իսկ եթե բացասական է՝ լրացվում է [Բ] վանդակը:

38. Միասնական հաշվարկի 34-րդ կետում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով պետական բյուջե վճարման ենթակա կամ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ակցիզային հարկի գումարը: Ընդ որում,

1) եթե լրացված է միասնական հաշվարկի 33-րդ կետի [Ա] վանդակը՝ ապա $([27] - [28.1] + [28.2] - [33.Ա])$ հաշվարկի արդյունքը լրացվում է [Ա] վանդակում, եթե այդ արդյունքը դրական թիվ է և [Բ] վանդակում լրացվում է «0», իսկ եթե այդ հաշվարկի արդյունքը բացասական թիվ է, ապա այն լրացվում է [Բ] վանդակում՝ բացարձակ արժեքով՝ [Ա] վանդակում լրացվելով՝ «0»,

2) եթե լրացված է միասնական հաշվարկի 33-րդ կետի [Բ] վանդակը՝ ապա $([27] - [28.1] + [28.2] + [33.Ա])$ հաշվարկի արդյունքը լրացվում է [Ա] վանդակում, իսկ [Բ] վանդակում լրացվում է «0»,

3) եթե լրացված է միասնական հաշվարկի 33-րդ կետի [Ա] վանդակը և $([27] - [28.1] + [28.2] + [33.Ա])$ հաշվարկի արդյունքը հավասար է 0-ի, ապա միասնական հաշվարկի 34-րդ կետի [Ա] և [Բ] վանդակներում լրացվում է «0»: